ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԳԱՅԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

РЕСПУБЛИКА
АРМЕНИИ
АРМАВИРСКАЯ ОБЛАСТЬ
ОБЩИНА ГАЙ

«_02_» _մայիսի_ 2012 թ.
թիվ_52_

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆԻՆ

Հարգարժան պարոն Ղահրամանյան

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գայի գյուղական համայնքի ղեկավարի 2012 թվականի ապրիլ ամսվա ընթացքում ընդունած որոշումները և արձակած կարգադրությունը:

Առդիր 6 թերթ:

Գայի գյուղական համայնքի ղեկավար՝ Ս. Մարկոսյան

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
Ստացված թիվ 4314-12
07-05-2012 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ

ԳԱՅ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

« 25 » ապրիլի 2012 թվականի

Որոշում N 35

ՀԱՍՑԵԱՎՈՐՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 16-րդ կետով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ և հիմք ընդունելով Սամվել Ինջիղուլյանի 2012թ. ապրիլի 16-ի դիմումը.

Որոշում եմ՝

1. Արմավիրի մարզի Գայի գյուղական համայնքի վարչական տարածքում գտնվող ԿՕ 04-033-061-011, բնակելի տանը տալ հասցե՝ Մ. Գորկու փողոց, թիվ 18/1:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Գայի գյուղական համայնքի ղեկավար Ս. Մարկոսյան

2012 թվական
մայիսի 2-ին
գ. Գայ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ

ԳԱՅ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

« 25 » ապրիլի 2012 թվականի

Որոշում N 34

ՀԱՍՑԵԱՎՈՐՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 16-րդ կետով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ և հիմք ընդունելով Մարգար Ինջիղուլյանի 2012թ. ապրիլի 16-ի դիմումը.

Որոշում եմ՝

1. Արմավիրի մարզի Գայի գյուղական համայնքի վարչական տարածքում գտնվող ԿՕ 04-033-061-011, բնակելի տանը տալ հասցե՝ Մ. Գորկու փողոց, թիվ 18:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Գայի գյուղական համայնքի ղեկավար՝ Մարկոսյան

2012 թվական
մայիսի 2-ին
գ. Գայ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԳԱՅ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
« 13» ապրիլի 2012 թվականի

Որոշում N 33

ԳԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ԱԲՈՎՅԱՆ 14 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԵՎ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՀՈՂՀԱՏԿԱՑՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ, ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԵՎ ՇԵՆՔ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԼԵՆԴՐՈՒՇ ՄԿՐՏՉԻ ՄՈՒՐԱԴՅԱՆԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Արմավիրի մարզի Գայի գյուղական համայնքի Աբովյան փողոց, թիվ 14 տան բնակիչ Լենդրուշ Մկրտչի Մուրադյանը դիմել է տնամերձ օրինական 1300քմ հողամասը, և կից 141.0 քմ ինքնակամ զբաղեցրած հողամասը, և օրինական հողամասում ինքնակամ կառուցված բնակելի տունը և շենք-շինությունները օրինականացնելու խնդրանքով, որը օրենքի ուժով կարող է փոխանցվել անհատույց սեփականության իրավունքով:

Հաշվի առնելով, որ կառույցը իրականացվել է մինչև 15.05.2001թվականը, համապատասխանում է Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1,2,3 ենթակետերով սահմանված պահանջներին և ընդգրկված չէ նույն օրենսգրքի 60-րդ հոդվածի նախատեսված սահմանափակումների ցանկում, ղեկավարվելով Հայաստանի Հնարապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 8-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 18.05.2006 թվականի թիվ 912-Ն որոշման կարգով սահմանված և սույն որոշման 22-րդ կետի 1-ին ենթակետով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 17-րդ կետով, «Հայաստանի Հանրապետության համայնքների վարչական տարածքներում իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին » Հայաստանի Հանրապետության օրենքով.

Որոշում եմ՝

1. Վերականգնել Արամավիրի մարզ, գյուղ Գայ, Աբովյան փողոց, թիվ 14 հասցեում գտնվող գույքային միավորների նկատմամբ քաղաքացի Լենդրուշ Մկրտչի Մուրադյանի գույքային իրավունքները՝ ճանաչելով նրանց սեփականության իրավունքը 1300քմ հողամասի, կից 141.0քմ ինքնակամ զբաղեցրած հողամասի և

օրինական 1300քմ հողամասի վրա գտնվող շենք- շինությունների նկատմամբ:

2. Ինքնակամ կառույցի օրինականացման համար վճար չի սահմանվում:
3. Առաջարկել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի համապատասխան մարզային ստորաբաժանմանը գրանցել քաղաքացի Լենդրուշ Մկրտչի Մուրադյանի սեփականության իրավունքը սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի և շենք-շինությունների նկատմամբ, տրամադրել նրանց անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Գայի գյուղական համայնքի ղեկավար՝ Ս. Մարկոսյան

2012 թվական
մայիսի 2-ին
գ. Գայ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ

ԳԱՅ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

« 26» ապրիլի 2012 թվականի

Որոշում N 36

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի երկրորդ մասի 4-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2002 թվականի փետրվարի 2-ի թիվ 91 որոշմամբ և հիմք ընդունելով քաղաքացի Սարգիս Կամոյի Հայրապետյանի 2012 թվականի ապրիլի 20-ի դիմումը.

Որոշում եմ՝

1. Սարգիս Կամոյի Հայրապետյանին տալ թույլտվություն Արմավիրի մարզի Գայ համայնքի Երևանյան 8 փողոց, թիվ 3, ԿԾ 04-033-021-005 հասցեում գտնվող սեփական տնամերձ հողամասում իրականացնելու բնակելի տան շինարարության աշխատանքներ:
2. Շինարարական աշխատանքները իրականացնել երկու տարվա ընթացքում:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Գայի գյուղական համայնքի ղեկավար Ս. Մարկոսյան

2012 թվական
մայիսի 2-ին
գ. Գայ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԳԱՅԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ « 30» մարտի 2012թ.-ի

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ N 2

ԱՆԱՀԻՏ ՏԵՐՏԵՐՅԱՆԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 158, 159-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N 1384-Ն որոշմամբ և հիմք ընդունելով Գայ համայնքի ղեկավարի օգնական՝ իրավաբանական գծով, Անահիտ Տերտերյանի 2012 թվականի մարտի 26-ի դիմումը.

Կարգադրում եմ՝

1. Գայի գյուղական համայնքի ղեկավարի օգնական՝ իրավաբանական գծով, Անահիտ Տերտերյանին տրամադրել 2012 թվականի ամենամյա արձակուրդը՝ ապրիլի 2-ից մինչև մայիսի 7-ը ներառյալ, 24 աշխատանքային օր տևողությամբ (20 աշխատանքային օր՝ նվազագույն և 4 լրացուցիչ օր):
2. Անահիտ Տերտերյանին աշխատանքի մեջ համարել 2012 թվականի մայիսի 8-ից:
3. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

Գայ համայնքի ղեկավար՝ Մարկոսյան

2012 թվական
մայիսի 2-ին
գ. Գայ